



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍՐՈՒ ԽԱՅԱՏՈՐՅԱՆ

Զ Ե Ր Մ Ո Ց Ն Ե Ր

15





ՍՐՈՒ ԽԱՋԱՏՐՅԱՆ



Զ Ե Ր Մ Ո Ց Ն Ե Ր

(ՊՏՂԱԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԶՈՆԱԼ
ԿԱՑԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ)



20295-
A II
23908

Նայված և Հայ. Գյուղ.
Խնամական Յերկը.
ամբիոնի կողմից. կազմից

Գրա. Խմբագիր՝ Ս. Խաչատրյան
Յեթն. Խմբագիր՝ Պ. Սարգսյան
Թրքագիր՝ Սոս Հակոբյան
Հանձնվել և արտագրության 1934 թ. հունվ. 25-ին.
Թարգմանվել և ապագրելու 1934 թ. փետրվ. 1-ին.
Պլավկա № 12 Տիրած 2000 Գրավեր № 55
Թեկ ապագր. թերթում 76.800 ապ. նը.

Ձ Ե Ր Մ Ո Յ Ն Ե Ր

Առաջին հնդամյակի ընթացքում բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության ղեկավարութեամբ, ժողովրդական տնտեսության ընդլայնման շնորհիվ ձեռք բերեց պատմական հաջողություններ: Կառուցվեցին մետաղաձուլման, էներգետիկայի, քիմիայի ու մեքենաշինարարության խոշորագույն հսկաներ, վորոնց մեծ մասը գերազանցեց և շատ հեռու անցավ յեվրոպական տեխնիկայից:

Պորերդային Միությունն անցավ առաջավոր ինդուստրիալ լերկրներ շարքը: Մեր մեքենաշինարարական արդյունաբերությունը, վորը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման այդ հիմնական բազան, այնքան աճեց, վոր իր առաադրանքի ծավալով գրավեց յերկրորդ տեղն աշխարհում: Սրա հետ միատեղ խոշոր չափով աճում և ու զարգանում բանվոր դասակարգը մեր արդյունաբերական կենտրոններում և նոր ստեղծված ինդուստրիալ-գիգանտների նորակառույց շրջաններում:

Բանվոր դասակարգի աճման ու վորը ազդաբնակչության տնտեսապես բարգաւաճման հետ միասին, մեր սոցիալիստական գյուղատնտեսության առաջ կարևորագույն խնդիր և դրվում բանվորների մատակարարման և ժողովրդական սննդի գործն ալելի լավ կազմակերպելու՝ բանջարեղեններով և կենսամթերքներիով ապահովելու համար: Այս գործում խոշոր դեր ունի կատարելու նաև բանջարաբուծությունը: Բանջարաբուծության սոցիալիստական վերակառուցման խնդիրը, կապված մեր յերկրի ժողովրդական տնտեսության և արդյունաբերության զարգացման ընդհանուր պլանի հետ, միշտ ևլ գրավել և մեր ղեկավար մարմիններին ուշադրությունը, վորպես բանվորական մատակարարման և ժողովրդական սննդի հիմնական բազաններից մեկը:

1930 թ. հուլիսի 16-ին Համամիութենական Ժողկոմխորհը, և նույն թվին կայացած Համկոմկուսի ու ԿՎՀ-ի ղեկտեմբերյան միացյալ պլենումը մի շարք կարևորագույն վորոշումներ ընդունեցին բանջարաբուծության զարգացման վերաբերյալ, ըստ վորում ընդր ազդային հանրապետություններում, մարդերում և

շրջաններում քանաշարանոցների տարածութիւնները պիտք եկազմակերպվի այնպէս, զոր ամեն մի շրջան ապահովվի իր ներսում արտադրած բանջարեղեններով, հասցնելով դործածութեան տարեկան նորման Զորդ հնդամյակի վերջում 150 կիլոգրամ մեկ շնչին: Այդ նպատակով բոլոր խոշոր քաղաքների և ինդուստրիալ-արդշուսարեղեկան կենտրոնների՝ քաղաքային զոնան հասկցվում և պտղաբանջարեղենների մշակութայնը:

Այս վորդուսներ կենսադործման հետեանքով, մեր սոցիալիստական բանջարաբուծութիւնն արագորեն զարդանալով դշուդատնտեսութեան սոցիալիստական հատվածով՝ խորհրտնտեսութիւններում և կուտնտեսութիւններում, վերջնականապէս դուրս և վանում անհատական, փոշիացած «սովորդարական» բանջարանոցները, դուրս բերելով բանջարեղենների մշակութայնը տնտեսդային փոքր տարածութիւններից սոցիալիստական լայն դաշտերը, մեքենայացրած կայուն բաղայի վրա, նորագույն ադրոտեխնիկայով—միանգամայն շախախելով սպորտուստական կուլակային այն տեսութիւնները, զոր իբր թե բանջարեղենների մշակութայնը մեքենայացման յենթադէկ և խոշոր բանջարաբուծական արտադրութիւն ստեղծելը հնարավոր չի: Ծանր ինդուստրիայի և մեքենայինարաբութեան զարգացումն ու ալդ հիման վրա ՄՏԿայանների ցանցի լայնացումն ու կազմակերպչորին-տնտեսապէս տնտեսդումը, վորպէս սոցիալիստական դշուդատնտեսութեան մեքենայացման բաղայի կազմակերպող և զեկալարող որդանների, որավուր ամրացում են ու զարգացում մեր խորհրտնտեսութիւնների և կուտնտեսութիւնների տնտեսական բազան, ստեղծելով իրականաբար հնարավորութիւններ նորագույն ադրոտեխնիկան մտցնելու դշուդատնտեսութեան բոլոր ճշուդերում, դրանց թիւում նաև բանջարաբուծութեան բնագավառում:

Այդ հիման վրա Զորդ հնդամյակում սոցիալիստական բանջարաբուծութեան առաջ դրված հիմնական իրագործելի խնդիրներն են՝ բերքատվութեան բարձրացումը, վորակի լավացումը և արտադրութեան այնպիսի կազմակերպում, զորը կապահովի թարմ բանջարեղենների արտադրութիւնն ամբողջ տարվա ընթացքում, այսինքն՝ տարվա բոլոր ամիսներին:

Բանջարեղենները, վորպէս սննդանշութեան և վիտամիններով հարուստ կենսամթերքներ, խոշոր նշանակութիւն ունեն ժողովրդական սննդի դործում, մինչդեռ նրանց բացութեա մշակու-


Յոլունը տարբեր շրջաններում պայմանավորվում և կլիմայական պայմանների նպաստավոր կամ աննպաստ լինելու խնդրով: Բանջարեղենների մեծ մասը, լինելով տաք յերկրներին բույսեր, իրենց աննցողութեան և բարձր բերքատվութեան համար պահանջում են բարձր ջերմութեան, յերկար վեղեւտացիոն շրջան և արևադարձային Այս պայմանները մեր բոլոր շրջաններում միատեսակ չեն, դրա համար ել մի շարք շրջաններում հնարավոր չն բոլոր բանջարեղեններին մշակութունը տանել բացութեայ բանջարանոցներում: Սակայն այս խնդիրները հեշտութեամբ լուծվում են ջերմատների և ջերմոցների միջոցով, վերոնք ապակեծածկ են և արհեստական կերպով տաքացվող հատուկ շենքեր են, վերոնց միջ բանջարեղեններին մշակութունը կարելի յն կատարել տարվա բոլոր յեղանակներին, անկախ կլիմայական պայմաններից:

Ջերմոցները և ջերմատները ծառայում են թե սածիլներ պատրաստելու և թե ձմաւն ու վաղ գարնան թարմ բանջարեղենների բուծման համար, վերով հնարավորութեան և ստեղծվում կաղմակերպել բանվորութեան անընդհատ մատակարարումը թարմ բանջարեղեններով՝ տարվա բոլոր ամիսներին:

Բանջարաբուծութեան սոցիալիստական վերկառուցման հետ միտան 1-ին հնգամյակում խոշոր չափով զարգացավ ջերմոցային ջերմատնային շինարարութեունը, սակայն այդ ասպարիշում մենք դեռ շատ հեռու յենք յիջրօպական մի շարք առաջավոր յերկրներից, վերի համար և 2-րդ հնգամյակում նախատեսված և խոշոր ներդրումներ կատարել այս գործի ապահովման համար: Սակայն սոցիալիստական բանջարաբուծութեան զարգացումը պահանջ և դնում վոչ միայն ջերմոցային տարածութեունների լայնացման, այլ նրանց լիակատար վերակառուցման, փոխարինելով փոքր ջերմոցները հսկա ջերմատներով, վերոնցից ամեն մեկը ծածկելով ապակով 0,5—2 հեկտար տարածութեուն, լայն հնարավորութեուններ և ստեղծում մշակութեան լիակատար մեքենայացման և ելեկտրիֆիկացման համար, մեծ չափով կրճատելով ձեռքի աշխատանքը, վերը պահանջվում և ջերմոցների դեպքում: Ջերմատները հնարավորութեուն են տալիս մեզ ավելի լավ ոգտադործել և դեկավարել աճեցողութեան բոլոր փակտորները— լույսը, ոգը, ջերմութեունը, խոնավութեունը, և մեկ հեկտար տարածութեունից անհամեմատ ավելի մեծ բերք ստանալը:

Ջերմատնային բանջարաբուծութեունը դեռ նոր և զարգացում ևորդողային Միութեունում:

Նա ունի ընդամենը մի քանի տարվա պատմություն, առկայն շնորհիվ այն խոշոր առավելությունների, զորը նա ունի ջերմոցների հետ համեմատած, դալիս և սահլու, զոր ջերմատանային բանջարաբուծությունը, զորպես մշակութայն աղելի կատարելագործված և մեքենայացված ձև, տնկատեղած խոշոր հետանկարներ ունի մեր բանջարաբուծության սոցիալիստական զերտկառուցման գործում (նկ. 1)։ Բայց և այնպես ջերմոցները մեզ մոտ առայժմ աղելի տարածված են և օգտագործվում են գլխավորապես սածիլներ ստանալու համար և Զ-րդ հնգամյակումն ևլ գետ յեղած ջերմոցներն զգալի նշանակություն են ունենալու բանջարեղենների վաղահաս սածիլներ ստանալու գործում։



Ն կ. 1.

Ջերմոցները հնարավորություն են տալիս ունենալ տնկելու համար պատրաստի սածիլներ այն փամանակ, յերբ բաց դաշտում դեռ նոր և սկզվում ցանքը, զորի շնորհիվ մենք աղելի շուտ ենք հասցնում բերքը և միաժամանակ յերկարացնելով բույսի աճեցողությունը մեկ ու կեսից յերկու ամսով, բարձրացնում ենք նրա բերքատվությունը։ Վերջապես ջերմոցները հնարավորություն են տալիս մեզ բարձր ջերմություն պահանջող կուլտուրաների (տոմատի, բադր՝յանի, տաքտեղի և այլն) մշակությունը բարձրացնել մեր նախալիտնային և լեռնային գոտիներում, զոր-

տեղ նրանց բացթիւյս մշակութիւնը հաջող բերք չի տալիս: Զերմոցային բանջարաբուծութիւնը մեզ մոտ 1-ին հնդամշակութիւնը բազմաւորն ուժեղ կերպով սկսեց զարգանալ և Ձուգ հնդամշակութիւնը լինելու յի մեծ ոգտագործման միջ: Սակայն մեր կոլտնտեսային լայն մասսաները և խորհանտեսութիւնները բանվորութիւնը դեռ լավ ծանօթ չեն ջերմոցային մշակութիւն տեխնիկային, մինչդեռ ջերմոցների հաջող մշակութիւնից և կախոված վաղահաս բանջարեղէնների պլանների կատարումը: Այս տեսակետից մեր կոլտնտեսութիւններին ջերմոցների աշխատանքներում ոգնութիւնը դալու նպատակով հրատարակելու և սույն գրքույկը, վորը հիմնականում յեկնելով մեր տընտեսութիւնների պայմաններից տալիս և աշխատանքների ագրոտեխնիկան:


ԻՆՁ Ե ԶԵՐՄՈՅԸ ՅԵՎ ԻՆՁ-ՊԻՄԻ ԶԵՐՄՈՅՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Զերմոցն իրենից ներկայացնում և 12—20 մետրանոց փոս տարբեր խորութիւն 35 ս.—80 սանտիմ., վորի մեջ լցվում և տաքացնող նյութը—մեծ մասամբ ձիու թաքմ աղը, վրան դրվում տախտակից կամ գերաններից պատրաստած արկղը, մեջը լցվում հողը և վրան ծածկվում ապակեպատ շրջանակներով: Կան և այնպիսի ջերմոցներ, վորոնց համար փոսեր չեն փորում և գոժաղը դասավորում են ուղղակի հողի յերեսին:

Զերմոցների ամենադիւրամուր մասը շրջանակներն են, վորոնք պատրաստվում են լավ շամի փայտից ու ծածկվում լավ հաստ ապակով: Այժմ շրջանակի ստանդարտ մեծութիւնը համարվում և 160 սանտ. յերկարութիւն և 106 սանտիմ լայնութիւն շրջանակները, կամ վերջին տարիներում բամբակի համար պատրաստված մեծ շրջանակները 2 մետր յերկարութիւն և 1 մետր լայնութիւն Շրջանակը պատրաստվում և 8—4 միջնապատերով, վորոնք բաժանում են շրջանակը 4—5 մասերի և հնարավորութիւն են տալիս ոգտագործել փոքր չափի ապակիներ (նկ. 2): Շրջանակները պատրաստելու ժամանակ ժմենամեծ ուշագրութիւնը պետք և դարձնել նրանց մաքուր և լավ հովաքելու վրա, վորպեսզի բոլոր մասերն ամուր ամեն իրար և վոչ մի անցք և արանք չմնա: Պատրաստելուց հետո շրջանակն տնպայման պետք և ներկել ոլիթով (յեփած ձեթով) և ռիւրայով, վորպեսզի պաշտպանենք նրանց խոնավութիւնից և ուժեղ արեից: Փորձերը

ցույց են տվել, վոր առանց ներկելու շրջանակը դիմանում է 4—5 տարի, ուրիշով ներկածը՝ 3—10 տարի, իսկ յուզաներկով ներկածը՝ 10—15 տարի, ուրեմն պարզ է, վոր ձեթը և ներկը առաջապանելով շրջանակը փտումից, բարձրացնում են նրա դիմացկունությունը, փոքրացնում նրա տարեկան մաշվածքը (ամորտիզացիան) և իջեցնում մշակույթի ինքնարժեքը։ Այնուհետև շրջանակի դիմացկունության և ջերմոցում լավ տաքություն պահելու տեսակետից մեծ նշանակություն ունի շրջանակի տաքակիներին մածիկ (դամասկա) քսելը։ Մեր շատ անտեսություններում շրջանակներն առանց ներկելու յեն և առանց դամասկայի (մածիկի)։ Ղա լավ չէ, վորովհետև շրջանակները շուտ կփչանան։

Ջերմոցները լինում են տարբեր մեծությամբ, նայած շրջանակների քանակին։ Վերջին տարիների փորձը ցույց է տվել, վոր աշխատանքի ռացիոնալ կազմակերպման տեսակետից ավելի նպատակահարմար է կառուցել 12—20 շրջանականոց ջերմոցներ։



Ջերմոցի շրջանակը

Նկ. 2.

և ըստ այնմ վերցնել փոսի յերկարությունը, իսկ լայնությունը համապատասխանելու ին շրջանակի յերկարության կամ 160 սանտիմ կամ 2 մետր։

Ինչպես ասացինք՝ ջերմոցներում մեզ մոտ գլխավորապես զբաղվում են վաղահաս սածիլների մշակությունը։ Մի հեկտար տարբեր մշակույթի սածիլ ստանալու համար անհրաժեշտ շրջանակների քանակը փորոշելիս պետք է յենել այն հաշվից, վոր ջերմոցի տարածության ամեն մի քառակուսի մետրի վրա տեղավորվի 300—400 հատ սածիլներ, ըստ վորում յեթե մի հեկտարի վրա տնկելու լինենք 20000—30000 հատ սածիլ, ապա ուրեմն,

կապահանջվի 40—50 շրջանակ, կամ 30—30 քառակուսի մետր
շերմոցային տարածություն:

ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ջերմոցների համար պետք է ընտրել հարթ, չոր, բարձր
դիրք ունեցող, ստորերկրյա ջրերից ազատ տեղ: Ճանկալի յե,
վոր հողամասը քիչ թեքություն ունենա դեպի հարավ, սակայն
այդ թեքությունը պետք է լինի 5—8°-ից վոչ ավել: Ջերմոցներն
ըստ յերկարության պետք է դասավորել արևելքից դեպի արև-
մուտք, յերեսով դեպի հարավ, և շրջանակներին ել տալ փոքր
թեքություն դեպի հարավ այնպես, վոր շրջանակի հյուսիսային
կողմը բարձր լինի հարավայինից 8—10 սանտիմետրով: Ջերմոց-
ների տեղը պետք է պաշտպանված լինի հյուսիսային և հյուսիս-
արևելյան ցուրտ քամիներից, վորովհետև ուժեղ քամիները մեծ
չափով իջեցնում են ջերմոցի ջերմաստիճանը:


Ջերմոցների տեղն ընտրելուց հետո պետք է բաժանել այն
կվարտալների, անցկացնելով հողամասի լայնությամբ ու յերկա-
րությամբ ճանապարհներ: Ճանապարհների լայնությունը կախ-
ված է նրանց նշանակությունից:

Յերկարությամբ ձգված ճանապարհները, վորոնց վրա պետք
է կուտակվեն հողն ու աղբը, պետք է 10—15 մետր լայնություն
ուսնենան, վորպեսզի սայլերն ու ավտոները հնարավորություն
ուսնենան յերթեկեկու, իսկ ջերմոցների միջի ընդլայնական ճա-
նապարհները պետք է լինեն նեղ, վոչ ավել 0,8—1 մետր: Շարքե-
րի թիվը և ջերմոցների քանակը մի շարքում կախված է ջեր-
մոցների ընդհանուր քանակից, հողամասի դիրքից ու մեծություն-
ից: Համենայն դեպս պետք է միշտ աշխատել դասավորել ջեր-
մոցներն այնպես, վոր աղբի, հողի և մնացած բոլոր աշխատանք-
ների կատարումը հնարավոր լինի մեխանիզացիայի յեմքերկեր:

Ջերմոցները տաքացնելու համար կարելի յե ոգ-
տազործել տարբեր նյութեր՝ ելեկտրականություն, տաքացրած
ջուր, գոլորշի, գոմաղը, խառնաղը և փողոցների աղը, սակայն
առայոժմ ջերմոցների տաքացման համար ամենատարածված ձևը
մնում է գոմաղըով տաքացնելը: Մեղ մոտ՝ Հայաստանում, գո-
յություն ունեն առայոժմ միայն գոմաղըով տաքացվող ջերմոց-
ներ, բացի Սարդարաբատի խորհտնտեսությունից, վոր ունի
ելեկտրական ջերմոցներ:

Ջերմոցները լցնելու համար մենք գործ ենք ածում գլխա-

վորապես ձիու թարմ աղբը, վորովհետեւ նա շուտ է տաքանում, տալիս է բարձր ջերմություն, վորը պահում է 3 ու կեսից մինչև 4 ու կես ամիս: Մյուս կենդանիների աղբը նույնպես կարելի է ոգտագործել ջերմոցները տաքացնելու համար, միայն թե սրանց ծակոտկենությունն և թափանցկանությունն ավելացնելու համար պետք է վերցնել այլ նյութերի հետ խառնված:



Նկ. 3.

Այսպես, որինակ՝ տավարի աղբը շնորհիվ իր ջրալիության խտության, դանդաղ է այրվում և տալիս է ցածր ջերմություն, չնայած վոր այրումը տևում է ձիու աղբից յերկար,—5 ու կեսից մինչև 6 ամիս: Ամենաբարձր ջերմաստիճանը տավարի աղբն առաջացնում է այրման 10-րդ որը, իսկ ձիու աղբը՝ 7-րդ որը,

այնուհետև ջերմությունն աստիճանաբար իջնում է, կանոնավորվում է և ավելի միապաղաղ դառնում, սակայն այրման ոգտակար ժամանակաշրջանում ձիու աղբի առաջացրած ջերմության որվա միջինը 36° է, իսկ տավարինը՝ 38° : Վոչխարի աղբը թեև առաջացնում է բարձր ջերմություն, սակայն իր կարճատև այրվողության հետևանքով ($2\frac{1}{2}$ ամիս), առանց խառնուրդի ջերմոցի տաքացման համար գործադրելի չէ:

Դոմաղբի այրումը կամ տաքանալը կատարվում է շնորհիվ տերրու բակտերիաների: Վորովհետև տավարի աղբը, շնորհիվ իր խտության և ջրալիության, դանդաղ է տաքանում, այդ պատճառով սովորաբար այն գործ են ածում վորևիցե մեծածավալ ծակոտկեն փխրուն նյութի հետ խառնած: Փորձերը ցույց են տվել, վոր յեթե տավարի աղբին, նրա ծակոտկենությունն ու թափանցիկությունն ավելացնելու համար վորոշ քանակությամբ թեփ խառնվի, ապա նրա այրման պրոցեսն արագանում է և ջերմաստիճանը բարձրանում:

Մոսկվայի բանջարաբուծական փորձակայանի ավյալներով տավարի աղբի քաշի $1\frac{1}{5}$ մասի չափով փայտի թեփի խառնուրդը տվել է այրման լավ ընթացք և որվա միջինը 34°C ջերմություն, այսինքն՝ ձիու աղբից 1 ասա. պակաս:

Նույնպես լավ արդյունք է տալիս $2\frac{1}{3}$ մաս տավարի և $1\frac{1}{2}$ մաս ձիու աղբի խառնուրդը:

Բացի ձիու, տավարի և վոչխարի աղբից մերձադաջային անտեսություններում ջերմոցները տաքացնելու համար կարելի չեն գործածել տնկրի և փողսցների աղբը, այսպես կոչված «տնային աղբը», վորը թեև ուշ է սկսում տաքանալ, սակայն տաքանալուց հետո առաջացնում է բավական բարձր, ձիու աղբին հավասար ջերմություն, և պահում է այդ ջերմությունը 5—6 ամիս, ուրեմն՝ խոշոր քաղաքների մոտ ջերմոցները կարելի չեն տաքացնել այդ տնային աղբով, վորի սկզբնական տաքացումը կամ այրումն առաջացնելու համար անհրաժեշտ է նրան խառնել $1\frac{1}{3}$ մաս ձիու թարմ աղբ:

Այսպիսով տեսնում ենք, վոր ջերմոցները տաքացնելու համար կարելի չեն գործածել տարբեր անասունների և տարբեր տեսակի աղբեր, միայն թե անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել նրանց այրման պրոցեսն առաջացնելու և կանոնավորելու համար: Ջերմոցները տաքացնող նյութերի տեղափոխումը անտեսությունները պետք է սկսեն աշնանից, ջերմոցների աշխատանքը

ներն սկսելուց առաջ, և շարունակեն մինչև վերջին ջերմոցների լցնելը՝ Այսպիսով բանջարաբուծական խոշոր տնտեսությունների քաշող ուժը և տրանսպորտը բերքահավաքից և աշնան հերկից հետո անմիջապես պետք է տրամադրել ջերմոցների համար գոմաղբ փոխադրելու գործին, վորպեսզի ժամանակին ապահովվի ջերմոցների նորմալ աշխատանքը:

Մեր սովորական ոռոսական ջերմոցների ամեն մեկ շրջանակի համար պահանջվում է միջին հաշվով 0,5 տոնն կամ մեկ մեծ սայլ գոմաղբ, վորից և պետք է յեղնել գոմաղբի պահանջը վորոշելիս:

Վաղորոք բերված գոմաղբն անժամանակ այրումից ու տաքանալուց ազատելու համար պետք է փռել 20—30 սանտ. հաստությամբ և ուժեղ կերպով նստացնել, տրորել, ամրացնել, վորպեսզի մեջն ող չանցնի ու այրում չսկսի գոմաղբն և չսառչի: Այսպես նստացրած շերտի վրա կարելի յն լցնել յերկրորդ շերտը և նույնպես նստացնել:

Գոմաղբով տաքացվող ջերմոցները լինում են յերկու հիմնական ձևի, դետնափոր ջերմոցներ և առանց փոսի, վերերկրյա ջերմոցներ: Առաջին ձևի ջերմոցները տարածված են մեղ մոտ և կոչվում են «ոռոսական ջերմոցներ», իսկ յերկրորդ ձևի ջերմոցները կոչվում են ֆրանսիական: Ֆրանսիական ջերմոցները համեմատած ոռոսականների հետ պահանջում են 1,5—2 անգամ ավելի գոմաղբ, այդ պատճառով ավելի տաք են, և գործ են անում այնտեղ, վորտեղ գոմաղբը շատ է ու տեղը խոնավ, ստորյալերկրյա ջրերը բարձր են և հնարավոր չեն փոսեր փորել:

Ռուսական ջերմոցների փոսի խորությունը կախված է ջերմոցը լցնելու ժամանակից և տեղի կլիմայական պայմաններից: Այսպես, ըստ փոսի խորության ոռոսական ջերմոցները բաժանում ենք յերեք խմբի:

1. Խոր կամ տաք-փոսի խորությունը 70—80 սանտ. լցվում է հունվարից մինչև փետրվարի 15-ը:

2. Նիսալեռ-կիսատաք, փոսի խորությունը 30—60 սանտ. լցվում է փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը:

3. Սաղր կամ սառը փոսի խորությունը 35—45 սանտ. լցվում է մարտի 15-ից մինչև ապրիլի վերջը:

Բանջարեղենների սածիլներ ստանալու համար սովորաբար վերցնում են կիսախոր ջերմոցներ, վորովհետև պամիդորի, տաքտեղի, բաղրջանի ցանքն սկսվում է փետրվարի 2-րդ կեսից հե-

տո, իսկ վաղահաս կաղամբը՝ ցանվում և աճելի շուտ փետրվարի սկզբից:

ՋԵՐՄՈՅԻ ՀՈՂԸ

Ջերմոցային աշխատանքների ժամանակ մենք գործ ենք ունենում սովորաբար հողի արհեստական խառնուրդի հետ, վորը պատրաստվում և տարբեր հողերի, փտած գոմաղբի և ավաղի խառնուրդներից:

Ջերմոցի հողի հիմնական մասը կաղմում և հումուսով հարուստ հողը, վորն ամեն տարի Ջերմոցները մաքրելուց հետո պետք և թաքմացնել, խառնելով նրան վորոշ քանակի փտած գոմաղբ, չիմ հող կամ խամ հող: Արհեստական հողի խառնուրդ կազմելիս պետք և յեղնել հիմնական հողի հատկութունից, յեթե հիմնական հողը խամ և, կամ առվույտնոցի հող, կամ թե չիմի հող և և ունի լավ կնձիկային կաղմվածք, այդ դեպքում մի մաս հողին խառնում են 1—1,5 մաս լավ փտած գոմաղբ և $\frac{1}{2}$ մաս ավաղ:

Այս խառնուրդից հարկավոր և ամեն մեկ շրջանակի համար միջին հաշվով $\frac{1}{2}$ սայլ կամ $\frac{1}{4}$ խորանարդ մետր հող, ընդունելով հողի հաստութունը Ջերմոցում 15 սանտիմ: Ջերմոցի հողը նույնպես պետք և պատրաստել վաղորոք և պահել ամեն մեկ կվարտալ Ջերմոցի համար իր համապատասխան տեղում:


ՋԵՐՄՈՅՆԵՐ ԼՅՆԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Ջերմոցները լցնելուց 6—7 ուր առաջ փռած գոմաղբը խըրխըրում են, հավաքում իրար վրա և կաղմում 2—2 $\frac{1}{2}$ մետր բարձրությամբ կույտեր: Կույտերը կազմելու ժամանակ դոմաղբը պետք և լավ քրքրել և այնպես անել, վոր շատ ծղնոտոտ գոմաղբը հավասարապես խառնվի քիչ ծղնոտ պարունակող աղբի հետ, վորպեսզի հետագայում այրումը միահավասար չսփով տեղի ունենա: Միաժամանակ պետք և հետեւել, վոր կույտ արած գոմաղբը լինի բավական խոնավ, յեթե նա չոր և, ապա պետք և ջրել սառը կամ տաք ջրով: Այսպես՝ կույտ արած գոմաղբը սովորաբար 3—4 ուրում տաքանում և և նրա մեջ սկսվում և այրման պրոցեսը: Յեթե գոմաղբը ձմռան ցրտերից այնքան և սառելի, վոր կույտներում այլևս չի տաքանում, այդ դեպքում դիմում են արհեստական տաքացման, ջրում են կույտը 3—5 դույլ յեռման

ջրով կամ կույտի մեջ դնում են տաքացրած քարեր, կամ չհա-
գեցրած կիր և ապա ջրում, կամ թե չե սառած կույտի ներսը
դնում են վորոշ քանակությամբ արդեն տաքացած ձիու թափ
աղբ: Այբման պրոցեսն սկսվելուց հետո կույտն ամբողջապես
և շատ հեշտությամբ տաքանում է:

Ջերմոցը կարելի է լցնել միայն այն ժամանակ, յերբ դո-
մազը լավ տաքացել է, հակառակ դեպքում լցնելուց հետո ջեր-
մոցը կարող է սառչել:

Ջերմոցը լցնելու ժամանակ դոմազըը նորից պետք է խառ-
նել և խրխրել, այնպես վոր նա միահավասար դասավորվի ջեր-
մոցի ամբողջ տարածության մեջ: Գոմաղըը պետք է լցնել փոսի
բերանի հետ հավասար, վորովհետև հետագայում նա այրման հե-
տևանքով կնստի և կիջնի: Ջերմոցի փոսը տաք դոմազերով լիքը
լցնելուց հետո, դնում են վրան ջերմոցի արկղը, վորը տեղա-
վորում են այնպես, վոր յերկու յերկար կողմերը լինեն հարթա-
չափով ուղիղ հորիզոնական վիճակում, իսկ կողքի կողմերին տա-



Նկ. 4.

լիս են թերություն 2—5°, այսինքն՝ հյուսիսային կողմը բարձ-
րացնում են հարավայինից 10 սանտիմետր, վորով և ամբողջ ջեր-
մոցի շրջանակներն ստանում են 2—5° աստ. թեքություն դեպի
հարավ—լուսավորության պայմանները լավացնելու և անձրևի
ջրերին հոսելու հնարավորություն տալու համար:

Արկղն ամրացնելուց հետո դնում են շրջանակները և ջեր-
մոցը ձածկում ճիլոպնիկով կամ խիրնիկով: Այս վիճակում ջեր-
մոցը մնում է 1—2 որ, վորի ընթացում տեղի յե ունենում դո-
մաղրի ամենաուժեղ այրումը և դոմաղըը տալիս է նստվածք: Այդ
ժամանակ հարկավոր է դոմաղըը վրտնելով լավ նստացնել ու մի
որից հետո վրան լցնել ջերմոցի հողը: Գոմաղըը նստեցնելիս

պետք և տրորել միահալասար ուժով և միահալասար ծանրութեամբ, վորովհետև հետադայում ջերմոցի սյն մասում, ուր աղբը լավ չի նստեցրած, այրումն ավելի ուժեղ գնալու պատճառով, կատացվի ավելի ուժեղ նստվածք և կառաջանա վոսեր—ջերմոցը փոս կընկնի, իսկ դա կխանգարի հետադա բոլոր աշխատանքներին:

Ջերմոցի մեջ հողը լցնում են լավ խառնելուց և պատրաստելուց հետո, հողը պետք է լինի «քեղ» վիճակում, յեթե հողը չոր է, ապա նախ պետք է թեթև ջրել, հետո «քեղ» վիճակում լցնել ջերմոց: Յեթե հողը դրսում սառչի և և առաջացրել սառած կոշտեր պետք է ջերմոցը լցնել հենց այդ կոշտերով: 1—2 որից այդ սառած կոշտերը կտաքանան և կվշրվեն, վորից հետո ձեռքի փոցխով հողը պետք է հալասարեցնել: Ջերմոցային աշխատանքների հաջողութիւնը մեծ նախով կախված է գոմաղբի և հողի կանոնավոր պատրաստելուց ու լցնելուց: Հողը պետք է ջերմոցի մեջ լցնել հալասար հաստութիւն շերտով, և մակերեսը պետք է լինի միանգամայն հարթ ու հորիզոնական: Վոչ մի թեքութիւն հողին տալ չի կարելի, վորովհետև հետադայում ջրելիս ամբողջ ջուրը կկուտակվի ջերմոցի ցածր մասում, իսկ վերին մասը կմնա միանգամայն չոր:

Հողի շերտի հաստութիւնը կախված է ջերմոցի նպատակից, յեթե միայն ցանք պետք է կատարվի, բավական է 10—12 սանտիմետր հաստութիւն, իսկ սածիլներ մեծացնելու և պիկիւրով կայր դնելու՝ 15—18 սանտ: Հողը պետք է այնպիս լցնել, վոր շրջանակը ծածկելուց հետո հողի մակերեսի և ապակու մեջ մնա 10—12 սանտիմետր ազատ տարածութիւն:


Հողը միահալասար լցնելուց հետո ջերմոցը նորից ծածկում են շրջանակներով և ճիւղալով ու թողնում, վոր հողը տաքանա: Պետք է ասել, վոր ջերմոցի ամենաուժեղ այրման ժամանակաշրջանում հողը լցնելու առաջին 2—3 որվա ընթացքում, ջերմոցում առաջացնում է 50—60° տաքութիւն և տեղի յե ունենում ամմոնիակի ուժեղ գոլորշիացում, ջերմոցում ստեղծվում է ցանքի համար աննպաստ պայմաններ, այդ ժամանակ ցանք կատարել կամ պիկիւրով կանել չի թույլատրվում, վորովհետև բարձր ջերմաստիճանից և ամմոնիակի գոլորշիներից ծիւրը կփչանան: Զի կարելի ցանել նաև չտաքացած, սառը հողում, ուրեմն հողը լցնելուց հետո պետք է սպասել 2—3 որ, վորպեսզի անցնի տեղի ունեցող ուժեղ այրման պրոցեսը, և հողում ստեղծվի նոր-

մալ միապաղաղ ջերմություն, վորից հետո նոր սկսել ցանքը կամ պիկիրովկան


ՅԱՆՔԸ ԶԵՐՄՈՅՆԵՐՈՒՄ

Ջերմոցներում ցանքը պետք է կատարել մեծ զգուշությամբ և խնամքով: Ցանում են շարքացան կամ շաղացան:

Շարքացանն ունի խոշոր առավելություններ, վորովհետև նա նորմալ պայմանների մեջ է դնում ծիլերի լույսից և սննդանյութերից ոգավիլը, հեշտացնում է նոսրացման աշխատանքները, միաժամանակ կատարվում է մեքենաներով և տնտեսում է սերմը:



ՆԱԽԴՅԱՆ ՍԵՐՄՈՅՆ




ՆԱԽԴՅԱՆ ՍԵՐՄՈՅՆ

Նկ. 5.

Վերջերս Մեքենայացման և ելեկտրիֆիկացիայի Համամիութենական Խնայողական հնարել է մի փոքրիկ մեքենա—Ջերմոցի շարքացան, վորն արագ կերպով կատարում է Ջերմոցում բոլոր կոլտուրաների շարքացանը, այնպես վոր այդ մեքենայի կատարելագործման և տարածման հետ միասին պետք է վերջ տալ շաղացանին և անցնել բացարձակապես շարքացանի: Շարքացան կարելի չի կատարել և ձեռքով: Ձեռքով շարքացան կատարելու համար, ինչպես և հետագայում պիկիրովկա անելու համար, պատրաստում են Ջերմոցի շրջանակի մեծության մի վրայտե դժաշար, վորը Ջերմոցի հողի վրա դնելով և սեղմելով ստանում են ակոսների հավասար շարքեր, վորոնց մեջ ձեռքով հավասար ցանում են սերմը, ապա ծածկում հողով:

Ցանքը կատարելուց առաջ Ջերմոցի հողը նորից ձեռքի փոցիով լավ հավասարեցնում են և հարթահարկով ստուգում, վորպեսզի վոչ մի թեքություն չլինի, վորից հետո ցանում են սերմը: Ցանքը հավասար կատարելու համար նախորոք մեկ ջերմ-

մոցի համար նախատեսած սերմի նորման բաժանում են յերկու մասի, սկզբից ցանում են մեկ մասը, ապա յերկրորդ մասով կտաւրում ցանքի հավասարեցումը, նոր տեղերը խտացնում և ամբողջ սերմը բոլոր շրջանակներին տակ հավասար շաղ տալուց հետո, սերմը ծածկում են կամ տալիս հողի տակը: Սերմը ծածկելու համար ցանքի վրա հավասար չափով մաղում են կամ թիթե ավազախառ ջերմոցի հող, կամ ավելի լավ և մաքուր ավազ: Պետք և աշխատել սերմը շատ հաստ հողաշերտով չծածկել, վոր-



Ջերմոցային Գրասար գախադաս

Նկ. 6.

պետքի ծիւծիւրը հեշտութեամբ դուրս գան: Ավազով ծածկելն ավելի լավ է, վորովհետեւ ավազը ջրի կուտակում չի առաջացնում և սերմերը պահպանում և ներումից: Սերմերի վրա հող մաղելու փոխարեն կարելի յե ձեռքի փաքիկ փոցիով սերմը տալ հողի տակ (փոցել), միայն թե պետք և խորը չփոցիսել, բայց և հողի յերեսին շատ սերմ չթողնել:


Սերմը ծածկելու առաջին ձևն ավելի գերադասելի յե, վորովհետեւ ապահովում է սերմերի միահավասար ծածկումը և տալիս է հավասար ծիւծիւր: Ծանփից հետո ջերմոցը պետք է անմիջապէս ջրել շատ մանր անցքեր ունեցող ցնցուղներով: Սովորական ցնցուղներով ջրել չի կարելի, վորովհետեւ ջրի ուժեղ հոսանքը լվանում է սերմը ծածկող հողի բարակ շերտը, մերկացնում է սերմերը և նրանց կուտակում է ջերմոցի մի անկյունում: Ջրելիս պետք է շատ ուշադիր լինել և թույլ չտալ, վոր ջուրը լճանա կամ հավաքվի ջերմոցի մեջ: Միահավասար չպետք է շատ ջրել, ջրել պետք է քիչ-քիչ և այնպէս, վոր ջուրն աստիճանաբար ծծվի

56702

80622 H

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

հողի ամբողջ շերտի մեջ: Ջրելուց հետո շերմոցը ծածկում են շրջանակներով և վրան դրում ճիւղայնէր, խտիւրներ կամ փալատի կտորներ, վորոնք մնում են նաև ցերեկվա ընթացքում, վորպէս-



Ջերմոցի ծածկոց գործելու ժեռ

Նկ. 7.

դի շերմոցը տաք մնա և չչորանա արեւից (ծելու համար կռչան անհրաժեշտ չէ): Ջերմոցի ծածկոցը կարելի չէ պատրաստել տըն-տեսությունում յեղեգներից կամ ճիւղատերից (Նկ. 7):


Ջերմոցը ճիւղայներով ծածկած պահոււմ են մինչև ծիւերի
յերևալը, վորից հետո ցերեկները ճիւղայները վերցնում են և ա-
պակիններն էլ լավ մաքրում, վորպեսզի արևի առատ լույս հասնի
բույսերին: Ջերմոցը ծածկած պահելով չպիտի մոռանալ, վոր մին-
չև ծիւն այնուամենայնիւ թարմ ող հարկավոր է, նշանակում է
Ջերմոցն ամեն որ պետք է ողափոխել, ինչպես ասում են, պետք
է ող տալ թեկուզ ամենակարճ ժամանակամիջոցով: Մինչև ծիւե-
րի յերևալը պետք է որական 2—3 անգամ դիտել ծածկած Ջերմո-
ցը, ստուգել՝ արդյոք ծիւերը չեն յերևացել, վորպեսզի ժամանա-
կին վերցվեն ճիւղայները: Փորձը ցույց է տվել, վոր մատղաշ ծի-
ւերը Ջերմոցում 2—3 ժամ ծածկած ֆնալու դեպքում ուժեղ կեր-
պով ձգվում են և անպետքանում: Միշտ պետք է հիշել, վոր
Ջերմոցում բույսի լավ զարգանալու համար անհրաժեշտ պայման-
ներից ամենաանպատ օրության մեջ է լույսը, ուստի պետք է
աշխատել, վոր ծիւերը յերևալուց հետո և հետագայում սածիլի
աճեցողութեան ամբողջ ժամանակաշրջանում լույսը լինի առատ,
ուրեմն՝ ապակիները պետք է լինեն միանգամայն մաքուր:

Ապակիները պետք է լվանալ ջրով, կամ թաց շորով և հե-
տո չոր շորով լավ չորացնել, վորպեսզի ցուրտ ժամանակ ապա-
կիները լվանալիս Ջերմոցը բաց չմնա և չսառչի, պետք է վերց-
նել ուրիշ շրջանակներ, լավ լվանալ, մաքրել և նրանցով փոխել
ծված Ջերմոցի շրջանակները:

Ծիւերը յերևալուց հետո Ջերմոցի խնամքը կայանում է
ջրելու, քաղհանի և ժամանակին ող տալու միջ: Յերեկվա ըն-
թացքում, նայած յեղանակին, Ջերմոցի ողն անհրաժեշտ է թար-
մացնել, պետք է ող տալ: Դրա համար պետք է ունենալ աստի-
ճանների բաժանած համապատասխան փայտյա հենարաններ, վո-
րոնք շրջանակի տակ դնելով բարձրացնում են նրա մի կողմը
ցանկացած բարձրութեան, նայած յեղանակին, այնքան, վոր թե
Ջերմոցը չսառչի և թե ողափոխութունը լրիւ կատարվի:

Ողափոխութունը պետք է կատարել ամեն որ, անգամ ա-
մենացուրտ օրերին, միայն թե ցուրտ օրերին շրջանակները յեր-
կար ժամանակ բարձրացրած պահել չի կարելի, պետք է նրանց
հաջորդաբար մեկ-մեկ բարձրացնել, պահել 1—2 րոպե և իջեց-
նել: Այդպես մի յերկու անգամ ամեն մի շրջանակը բարձրացնե-
լով, կարելի չէ բավարար չափով Ջերմոցի ողը փոխել և մաքրել,
յեթի յեղանակը շատ ցուրտ չէ, ապա ողափոխութունը պետք է
կատարվի ավելի յերկար ժամանակով 1—4 ժամվա ընթացքում,

խիստ հետաքայլում, յերբ որերը կտաքանան, անգամ ամբողջ որվա ընթացքում: Փետրվար-մարտ ամիսներում, դաշտավայրում ցերեկները հնարավոր է անգամ 2—3 ժամով շրջանակները բոլորովին վերցնել Ոդ տալուց շրջանակները պիտք է բարձրացնել քամու հակառակ կողմից, վորպեսզի ջերմիցն ուժեղ չսառչի, իսկ հանդարտ յնդանակներին ավելի նպատակահարմար է շրջանակները բարձրացնել ներքևի, հարավային կողմից, վորովհետև միշտ խոնավությունն ավելի շատ կուտակված է լինում ջերմոցի հարավային պատի մոտ չավ է ողը տալ նաև յերկու հակառակ կողմերից, այսինքն՝ մեկ շրջանակը բարձրացնել հարավից, մյուսը՝ հյուսիսից, այդպիսով ստեղծել ողի հոսանք, վորով և ավելի լրիվ



Ջերմոցների ող քաղաք քարերի վերջը

նկ. 8.

ողակտխություն տեղի կունենա: Վորոշ դեպքերում կարիք է զգացվում ողը տալ շրջանակների կողքի կողերից—արևելքից և արևմուտքից:

Ողը տալուց միշտ պետք է հետևել, վորպեսզի ջերմոցի նորմալ ջերմաստիճանը չիջնի: Ամենալավ ջերմությունը համարվում է կողամբի և տյլ խաչածաղկավորների համար 18° , իսկ մնացած բույսերի՝ պամիդորի, տաքտեղի, բադրժանի և այլնի համար՝ $22—25^{\circ}$, դրանից բարձր ջերմություն ունենալու կարիք չկա: Ջերմությունը դիտելու համար պետք է ջերմոցում ունենալ ջեր-

մայափ, վորը տեղավորել ջերմոցի ստվերոտ տեղում: Ջերմոցի խնամքի դրժում առաջնահարգ խնդիրներէից մեկը կանոնավոր ջերմաստիճան պահելն է, վորի վրա պետք և ամենալուրջ ուշադրութեանը դարձնել և թույլ չտալ ջերմաստիճանի ուժեղ տատանումներ:

Ողի և լույսի կանոնավորման խնդիրների վրա ևս պետք է դարձնել մեծ ուշադրութեամբ:

Սա ծիւլ մեծացնելու ձեւերը.— Բանջարեղենների սերմերը ջերմոցում ցանդում են խիտ, ծիւրերն ստացվում են խիտ և յեթե բույսերը չնստեցնենք և չդնենք նորմալ պայմանների մեջ, նրանք չեն կարող հաջող դարձանալ և առողջ ու պիտանի սածիլներ դառնալ, այդ պատճառով ջերմոցային մշակութեան մեջ ընդունված և սածիլ մեծացնելու մի քանի ձևեր:


Ջերմոցային հին ագրոտեխնիկան ստեղծել և սածիլ մեծացնելու մի ձև, վորի ժամանակ բույսերի մատղաջ ծիւրերը շաքիլատեղե հասակում յենթարկվում են տեղափոխման, վերատնկման, կամ ինչպես ընդունված և ասել յենթարկվում են պիկիրովկայի: Պիկիրովկայի նշանակութեանը կայանում և նրանում, վոր հնարավորութեամբ և տայիս ստանալ հարուստ արմատական սխտեմ ունեցող սածիլներ: Ինչպես հայտնի յե, մեր սածիլավոր բանջարեղեններն ունենալով խոր դնացող դլիավոր արմատ լալ չեն կարող ոգտագործել հողի վերին հարուստ շերտերը, յեթե չունենան յերկրորդական փնջած արմատներ, վորոնք հեշտութեամբ առաջանում են նրանց մատղաջ ցողունից, հողով ծածկելու դեպքում:

Բույսին այդ հնարավորութեանները տալու համար, սածիլը մեծացնում են այնպես, վոր նա ունենա լալ դարդացած փարթամ փնջած արմատներ, հենց դրա համար ել կատարում են պիկիրովկա: Բանջարեղեններից շատերը՝ կաղամբը, պամիդորը, բադը, ջրանը, տաքտեղն ունենան այն հատկութեանը, վոր յերբ մատղաջ հասակում նրանց ցողունը ծածկվում է հողով ծածկված տեղում, առաջացնում են նոր արմատներ: Բացի դրանից, պիկիրովկայի ժամանակ բույսերը տնկվում են վորոք հեռավորութեան վրա կանոնավոր շարքերով և այդպիսով դրվում են աճեցողութեան համար նպաստավոր պայմանների մեջ: Պիկիրովկան պետք և կատարել այն ժամանակ, յերբ ծիւրերն սկսում են տալ առաջին խնկական տերևը: Պիկիրովկան կատարելիս պետք է պատրուտել մի նոր ջերմոց և լցնել նրա մեջ 12—15 սանտիմետր հաստութեամբ ջերմոցի հող, վորը լալ հավասարեցնելուց հետո, տախտա-

կե հատուկ դործիքով նստացնել, ապա դժաշար տախտակով քաշել գծեր և այնուհետև կատարել պիկիրովկան կամ սածիլումբը: Մըածայր փայտով բաց են անում հողում մի ուղղահայաց անցք կտրում են ծայրից պիկիրովկայի յենթակա բույսի դլխավոր շարժատի ¹/₃ մասը, ապա իջեցնում են բույսն անցքի մեջ ամբողջ ցողունի խորությամբ մինչև շաքիլատերեւները և նույն սքածայր փայտը շեղ ուղղությամբ խրելով հողի մեջ, այն տալիս են տընկած բույսի վրա ու ամրացնում:



Արհեստական փայտաբույս
ճենրը



Նկ. 9.

Այս գործողության ժամանակ պետք է անպայման սքածայր փայտը շեղ ուղղությամբ ավելի խորը տանել, քան աստիճանացի բանալի, վորպեսպի հողը վրա տալուց հետո տնկած բույսի աբմատներին տակը բաց չմնա, հակառակ դեպքում սածիլած բույսը չի բոնի և կչորանա: Բացի դրանից՝ հողը պետք է սեղմել աստիճան, այնպես վոր, յեթե փորձենք տնկած բույսը շաքիլատերեւներից բռնած հողից դուրս քաշել, ավելի շուտ պետք է շաքիլատերերը կտրվի, քան բույսը հողից դուրս դա: Այս հանգամանքների վրա պետք է ամենալուրջ ուշադրությունը դարձնել, վորպեսպես պիկիրովկայի անհաջողությունների պատճառներից ամենաուշիմունները սրանք են: Պիկիրովկան պետք է կատարել տաք յեղանակին, վորպեսպի վոչ ջերմոցը սառչի, վոչ ել մատղաշ

բույսերը փչանան: Պիկիրովկան անում են 6 կամ 8 սանտիմետրի վրա, ըստ վորի մեկ շրջանակի տակ տեղափորվում է 400—500 սածիլ: Մեկ բանվորը 8 ժամում անում է 2500—3000 պիկիրովկա:

Ամեն մի շրջանակ պիկիրովկա անելուց վերջն անմիջապես թեթե կերպով ջրում են և շրջանակը դնելով վրան ծածկում ճիլոպով կամ խսիրով, վորը թողնում են ջերմոցի վրա 2—3 որ: Պիկիրովկան 2—3 որ ծածկած պահելն անհրաժեշտ է նրա համար, վորովհետև նոր անկած մատղաշ բույսերը շատ շուտ թառամում են և փչանում, իսկ ծածկած վիճակում նրանք մնում են թարմ և հեղուկացած կաշու: Սակայն այս դեպքում էլ ողջ առլը անհրաժեշտ է, վորովհետև առանց ողի բույսերն աճել չեն կարող: 3—4 որից հետո պիկիրովկան արդեն կաշում է, և ճիլոպները ցրեկը պետք է վերցնել ու ապակիները մաքրել:

Այս ձևով կատարած պիկիրովկան թեև տալիս է խոշոր արդյունք, սակայն ամբողջ աշխատանքը ձեռքով կատարելը մեր ներկա պայմաններում սոցիալիստական խոշոր տնտեսություններում այլևս հանդուրժել չի կարելի և արդեն աշխատանքներ են տարվում պիկիրովկան մեքենայացման յենթարկելու համար, կամ սածիլ մեծացնելն անյապա տանել, վոր առանց բույսերի տեղափոխման ստեղծել նրանց համար այն բոլոր պայմանները, վորն ստեղծվում է պիկիրովկայի ժամանակ: Մոտ տարիներում հաճանական է, վոր պիկիրովկան այժմվան իմաստով միանգամայն վերանա և սածիլ մեծացնելու համար առաջարկվի ավելի պարզ և մեքենայացված հետևյալ ձևը:

Ցանքը կատարում են ջերմոցում շարքացանով, շարքից 8—10 սանտիմետր հեռավորության վրա: Ծիլերը դուրս դալուց հետո կատարում են նսարացում և թողնում բույսը բույսից 4—6 սանտիմետր հեռավորության վրա, այնուհետև բույսերը մի 4—5 սանտիմետր բարձրանալուց և առաջին իսկական տերեքը յերևալու ժամանակ բույսի ցողունները ծածկում են հողով մինչև շաքիլատերևներն ու լամ ջրում: Հողը կարելի չի առլ և սովորական բույսիցի ձևով, կարելի չի ուղղակի լամ պատրաստալ թեթե ավաղախառ հող մաղել բույսերի վրա տյնքան, վոր ամբողջ բույսը չթաղվի հողի տակ, այլ միայն ցողունը ծածկվի:

Այսպիսով բույսը ցողունի հողով ծածկած տեղից շատ հեղուկացած տաղացնում է նոր մազարմատներ և սածիլն ավելի շուտ և հասցնում, վորովհետև տեղափոխման չի յենթարկվում:

Այս ձևն ունի այն առավելութունները, վոր Հոլանդացիներով բույսերի տեղափոխում, վորը կատարվում է ձեռքով և 10—15 որով ուշացնում սածիլի պատրաստ լինելը, հնարավոր է դարձնում լինողին մեքենայացման յենթարկել և խոշոր Հավով կրճատել ձեռքի ծանր աշխատանքը:

Մեր փորձակայանների աշխատանքները ցույց են տվել, վոր այս ձևով ստացվում է շատ լավ սածիլ և ափիլի քիչ բանում է պահանջում նրա պատրաստելու համար: Մակայն սածիլ մեծացնելու այս ձևը դեռ նոր է ուսումնասիրվում մեր փորձակայաններում և մշակվում է նրա մեքենայացված ազդեցությանիկան, վորը կհամապատասխանի մեր սոցիալիստական բանջարաբուծության պահանջներին:


Բացի սրանից վերջին 2 տարում վերջաբե աշխատանքներ են տարվում Վերմոնցային բուրբ աշխատանքները մեքենայացման յենթարկելու համար, որինակ՝ պրոֆ. Նովիկով Գոլովանտին 1932 թ. „Плодоовощное хозяйство“ ամսագրում առաջարկում է մի նախագիծ, ըստ վորում կարելի յն Վերմոնցների հող և դոմադը կրելը կատարել մեքենայացված սայլակով, վորը դրվում է ռելսերի վրա, նույն այդ ունիվերսալ սայլակին կարելի յն կցել մի շարք՝ գործիքներ՝ քաղան, փերացում, բուռ տալ, ջրել և սածիլ հանելու աշխատանքները կատարելու համար:

Այդ ուղղությամբ արդեն աշխատանքներ սկսվել են, իսկ մինչ այդ առաջիկա 1—2 տարում պիկիրովկան, վորպես առողջ սածիլ ստանալու մի միջոց, կարելի յն գործադրել Վերմոնցային աշխատանքներում:

Սածիլի հետագա խնամքը կայանում է ջրելու, քաղանի, փերեցման և ուր տալու մեջ: Զերմոցները ջրում են սովորաբար ցնցուղներով, սակայն այս ձևը պահանջում է շատ ձեռքի աշխատանք, և կարելի յն շատ հեշտությամբ ուսցիտնալիզացիայի յենթարկել հետևյալ պարզ ձևով, Վերմոնցների մոտ պատրաստում են ջրի ալազան, վորից ջուրը նասոսով կամ պոմպով հանում են և ռեզինե խողովակով մոտեցնում Վերմոցներին և ջրում այնպես, ինչպես ցույց է տված նկարում:

Սածիլները պետք է ջրել ըստ բույսի պահանջի: Զրի խնդիրն առաջնակարգ խնդիրներից մեկն է, վոր աչքաթող անելը կամ անկախոն կատարելը կարող է գոչնչացնել ամբողջ Վերմոցը: Սածիլները Հպետք է ջրել սառը ջրով, այլ պետք է վերցնել սենյակի ջերմության ջուր, ջրել պետք է հավասար այնպես, վոր

Ջերմոցի բոլոր մասերն եւ հաւասար չափով խոնավանան, այնուհետեւ պետք ե ջրիւ այնքան, վոր Ջերմոցի ամբողջ հողաշերտը լամ ծծվի ջրով ե խոնավանա: Սովորաբար 1 շրջանակից 3—6 դույլ ջուր ե դնում, այդ դեպքում հաճախ ջրելու կարիքը չի գգացվի ե հողը կունենա նորմալ խոնավություն Ի հարկե ջրելու քանակը ե ջրի չափը կախված ե տարվա յեղանակից ե գորշիացման աստիճանից: Անհրաժեշտ ե ուշուշ ջրել, լամ ջրել ե ամեն մի ջրից հետո հողի «քեշ» յեկած ժամանակ խրխրել: Դա



Նկ. 10. Զերմոցների յեվ տաճ մարզի ջրելը Լեռնակամի փորձակայանի ջերմոցներում, Ռայտայոյի խորհրդանոցայանում:

կնպաստի ե խոնավության պահպանման ե ողի թափանցելուն հողի մեջ, վորը ե խողոր նշանակութուն ունի բույսերի աճեցողության համար: Յերբ Ջերմոցը լամ չեն ջրում, այսինքն՝ քիչ են ջուր տալիս ե հողի ամբողջ շերտը չի խոնավանում, կարիք ե լինում հաճախ ջրելու, մանավանդ մարտ-ապրիլ ամիսներին: Շատերն ամեն որ Ջերմոցը թեթե ջրում են «շաղ են տալիս», ստացվում ե այն տալավորութունը, վոր իբր ջուր շատ են տալիս

«ամեն որ ջրում են», մինչդեռ բույսերը ջրի պակասությունից չորանում են։

Մարտ և ապրիլ ամիսներին անձրև դալու դեպքում ջերմոցները պետք է բաց թողնել անձրևի տակ։

Բաղնիկ և փխրացման վրա պետք է նույնպես լուրջ ուշադրություն դարձնել և այդպիսիք կատարել ժամանակին, մասնավոր փխրացումը Պետք և միշտ հետևել, վոր սածիլն իր դարձացման ամբողջ ընթացքում լինի մուգ կանաչ գույնի, չգեղնաւա, չձգվի և չհիվանդանա։

Սածիլի մեծանալու հետ զուգընթաց անհրաժեշտ է նրան ստվերեցնել դռնի պայմաններին—սածիլը ամբարցնելու Դրա համար աստիճանաբար, յնպատակները տաքտնալու հետ միասին, սկսում են ցերեկներն ոգը բարձր տալ, ավելի յերկար ժամանակ ոգ տալ, հետո ամբողջ ցերեկը ջերմոցը բաց պահել, հետո գիշերները ճիւղայները վերցնում են, այնուհետև սկսում են գիշերներն ել բարակ ոգ տալ, աստիճանաբար որեց որ գիշերվա ոգն ավելի բարձրացնել, իսկ սածիլը դաշտ դուրս բերելուց 7—10 որ ատույ սկսում են արգեն գիշեր և ցերեկ ջերմոցները բաց թողնել, միայն թե տաքին որեքը պետք է միշտ ունենալ գիշերվա հերթապահության, վորպեսզի ոգի ջերմության հանկարծակի ուժեղ փոփոխման դեպքում անմիջապես ձեռք առնվին միջոցներ ջերմոցները ծածկելու համար։



Ջերմոցներից բացի վաղահաս սածիլներ կարելի չէ ստանալ նաև Շուք մարգերում։ Սրանք նույն ջերմոցներն են, սակայն ավելի սաղր (30—40 սանա. խորությամբ), առանց ապակեով ծածկված շրջանակներով։

Տաք մարգերը պատրաստում եր մարտ-ապրիլ ամիսներում, դիտավորապես սածիլներ ստանալու համար։ Այստեղ տեխնիկան և խնամքը նույնն են, ինչ վոր ջերմոցներում, այն տարբերությամբ, վոր տաք մարգերն ամբողջ ցերեկը բաց են, ծածկվում են միայն գիշերը, այն ել ճիւղայներով կամ խիլներով։ Մնամքով և ուշադիր վերաբերմունքի դեպքում, տաք մարգերում կարելի չէ ստանալ նույնպես լավ, առողջ և վորակով սածիլներ, ինչպես և ջերմոցներում։

Ջերմոցային առխառնմանի տաքացրակաճ հոգմաները Փերեպլանի
հաղափամերձ ճեղքաւորումում 1928 թվին

№ Ջերմոցային հաղափամերձ	Առխառնմանի տեսակը	Ջերմոցային միավոր	Մեկ բանվորի նորման 8 ժամյա աշխատանք	Մասնագործի թիվը
1	Ջերմոցի փոսերի փորելը . . .	խոր-մետր	3,5 խ. մ.	
2	Գոմաղբի փոխադրումը ֆուր-դաններով 5 կիլոմ. տարածու-թյան վրա	տոնն	1,5 տ.	մի ֆուրդանը 0,5 տոնն
3	Գոմաղբի լցնելը ֆուրդանի վրա	»	7,5 տ.	=15 ֆուրդ.
4	Շրջանակներին ապակի դնելը և զամառակա ջանքը	հատ շրջ.	10 շրջանակ	
5	Ջերմոցների ժաքրումը ձյու-նից	խոր-մետր	30 խ. մ.	
6	Գոմաղբի կույտ անելը . . .	տոնն	8 տ.	=16 ֆուրդ.
7	Ջերմոց լցնելը գոմաղբով, կող-ջերը պատրաստելը, շրջանակ-ները և արկղը դնելու և գո-մաղբը փոխադրելու հետ միա-տին	շրջանակ	5 շրջանակ	գոմաղբի հաստութ. 70 տանտի-մետր
8	Նույնը գոմաղբի հաստութ. 50 տանտիմետր	»	8 »	
9	Ջերմոցի հող լցնելը 12—15 տանտիմ հաստությամբ, հողը նախընկալով 30—50 մետր հե-ռավորութիւնից կրելու հետ միատին	»	10 »	
10	Նույնը՝ յեթե հողը գտնվում և Ջերմոցի մոտ	»	30 »	
11	Հողի հաժախարեցումը ձեռքի փոցիով	»	60 »	
12	Շրջանակներ բաց անել և ծածկել, ոչ տալու հետ միա-տին	»	500 »	
13	Ծանր շաղապան, հողը նախա-պես հաժախարեցնելու և ցան-քը փոցիով ծածկելու հետ միատին	»	40 »	
14	Ծանր ջարձացան ձեռքով . .	»	12 »	
15	Պիկիրովկա, պատրաստի սա-ծիկները մատակարարելու գնա-լքում	հատ սած.	3000 հատ	
16	Նույնը սածիկ հանելու և փո-խադրելու գնալքում	»	2500 հատ	
17	Քաղհան ձեռքով, ղառ քաղ-հանոտ Ջերմոցներում	շրջանակ	30 շրջանակ	

№ համար կարգի	Աշխատանքի տեսակը	Իմ- ացվելի քանակը	Մեկ բանվորի նորման 8 ժամվա աշխատանք	Ծանոթու- թյուն
18	Նույնը մուխոտները քիչ լե- նելու դեպքում	ըրջանակ	60 ըրջանակ	
19	Փխրացում ձեռքով	»	30 »	
20	Ջերմոց շերտը ձեռքի ցնցու- ղով, յուրաքանչյուր ըրջանակ- մեկ ցնցուղ	»	200 »	Շուրջ ջերմո- ցից 10—15 մետրի վրա
21	Ջերմոցները խոբրներով ծած- կելը	»	600 »	
22	Սածիլ հանել և դարձնել դաշտ փոխադրելու համար	հատ հատ	7000 հատ	



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002782

9122 40 400.

A $\frac{\pi}{23908}$

084.



СРО ХАЧАТРЯН
П А Р Н И К И

Сельхозгиз

1934

Эривань